ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1888-Ա « 09 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի Հ.7262-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ըստ օրենքի 15.10.2025 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 04.025.2026 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 31-ի «Նոր Արեշի 20-րդ փողոցի նրբանցքի հ.1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Պայծառ Միրանի Խոշորյանի, Հարություն Միհրանի Խոշորյանի, Մայրամ Զաքարի Ալթունյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.7262-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրից, նախաբանից, 1-ին և 5-րդ կետերից հանել «Հարություն Միհրանի Խոշորյանի, Մայրամ Զաքարի Ալթունյանի» բառերը,

2) Որոշման նախաբանում «Հարություն Միհրանի Խոշորյանի (ծնված 07.02.1961թ.) «Մայրամ Զաքարի Ալթունյանի (ծնված 04.02.1934թ.)» բառերը,

3) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով,

4) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին և 5-րդ կետերում «Պայծառ Միրանի Խոշորյանի» բառերը փոխարինել «Պայծառ Միհրանի Խոշորյանի» բառերով,

5) Որոշման նախաբանում «414.7»3 թիվը փոխարինել «419.53» թվով,

6) Որոշման նախաբանում, 1-ին կետում «196.73» թիվը փոխարինել «201.53» թվով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ